

25 Յունուար, Շաբաթ երեկոյեամ ժամը 6ին, քաղաքին Հրեական բաժնին մէջ գտնուող Ռուս Օրբոսոր Եկեղեցւոյ Ս. Ալեքսանդրա փոքր Եկեղեցին լեցում էր ամենազգի հաւատացեալ Սերով, որոնք երկու ժամեր շարունակ ու Ակնդրեցին առաւելաբար Ռուս մայրապետներէ խմբերգուած Պատրիարքաւու Եկեղեցւոյ քաղցրալուր մեղեդիներէ: Մեր կողմէ Սերկայ էր Հոգ. Տ. Գուսան Վրդ:

26 Յունուար, Կիրակի, Երեկոյեամ ժամը 6ին, Յոյն-Կաքուիկներու Եկեղեցւոյ մէջ կայացաւ եղափակիչ աղօթաժողովը, ի Սերկայութեամ միաբանակ չորս Եկեղեցիներու Հայոց (որոնցմէ Սերկայ էին Լուսարաբապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպո., որ կարճ աղօթք մը ալ ըրաւ, Հոգ. Տ. Գուսան Վրդ, և Հոգ. Տ. Բագրատ Արք.), Ղպտոց, Ասորուց եւ Հապէշաց Եպիսկոպոսներուն, Ասորի Կաքուիկներու հովիւին, Լուտերականներու Փրօփսիին (Երիցապետ), Տորմիսիոններու Արքահօր եւ Լատիխաց Պատրիարքաբաէն Եկեղեցականներուն: Յայուագիրը կը բաղկամար Բիւզանդական Եկեղեցւոյ Երեկոյեամ ժամերգութեամ, որում աւարտին հիւր Եկեղեցականներէն իւրաքանչիւրը հրաւիրուեցաւ իր լեզուով կարճ աղօթք մը ընելու: Նմանօրինակ մալթաքըմեր ըրիմ մատեւ Սերկայ աշխարհականներէն մի քամին: Յետոյ կատարուեցաւ հացի, զիմիի, ձերի եւ ցորենի օրինութիւնը, եւ Սերկան նաշակեցին առաջին Երկուրը: Արարողութեամ ընթացքին, Յոյն-Կաքուիկ Լութի Լահիամ Եպիսկոպոս բացատրեց Ապատակն ու բնոյքը Էրումէնիկ շարժումին, եւ ամենող տարուամ ընթացքին ամոր արձանագրած Առաւանումները, հակիրճ բացատրութիւններ տալով Արքերէն, Ֆարանտերէն, Ամզլերէն, Գերմաններէն եւ Խոտաներէն լեզուներով: Արարողութեամ աւարտին թերեւ պատուափրութիւն մը տեղի ունեցաւ:

Գ.Ճ.

ՄԵՄՐՈՊ ՎՐԴ. ԱՍՈՂԼԵԱՆ ԿԱՐԳԱՎՈՅՑ

Երուսաղէմի Սրբոց Յակոբեամ Միաբանութեամ ամեամներէն Մեսրոպ Վրդ. Ասողլեան (մկրտութեամ ամունով՝ Պետրոս Ասողլեան), իր ամուղիղ կենցաղին հետեւամբով ամպարտանամաշ, վամական կարգապահութեամ համելու անտարբեր, արհամարհու իր ընթացքին համար բազմիցս խրատուած եւ ազդարարուած էր: Վերջին անգամ, Լուսարաբապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան զգուշացուցած էր զիմք որ իր կամակոր Ակարագրին եւ ամուղդայ ընթացքին պատճառով պիտի պարտաւորուի իր մասին պատիժ սահմանել:

Սուտ խօսելով եւ կեղծիքով, առամց Մատակարարի իր պաշտօնին հաշուետուութիւնը եւ փոխանցումը կատարելու, Մեսրոպ Վրդ. Ասողլեան ամյայտացած է, 1992 Փետրուար Յ թուականներ սկսեալ, եւ ցարդ ոչ մէկ բացատրական գրութիւն ստացած եմք իրմէ:

Տնօրէն Ժողովին հետ խորիշակցելէ յետոյ, այսու զիրով Մեսրոպ Վրդ. Ասողլեանը կարգալոյն կը յայտարաբեմք, զրկելով զիմք ձեռնադրութեամբ իրեմ տրուած առանձնաշնորհներէ, դասելով զիմք աշխարհականաց կարգը, Պետրոս Ասողլեան ամունով:

9 Փետր. 1992

Թօրգոմ Արք. Մամուկեան
Պատրիարք Երուսաղէմի